

Հաստատված է՝

«Վ. Բրյուսովի անվան պետական համալսարան»

հիմնադրամի գիտական խորհրդի

27.12.2021 թ. № 6 նիստի որոշմամբ

ԲՊՀ-ի ռեկտոր, գիտական խորհրդի նախագահ՝

Կ. Վ. Հարությունյան



«Վ. ԲՐՅՈՒՍՈՎԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ

ՀԱՆՐԱԿԱՑԱՐԱՆԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. «Վ. Բրյուսովի անվան պետական համալսարան» հիմնադրամի (այսուհետ՝ ԲՊՀ) հանրակացարան (այսուհետ՝ Հանրակացարան) ԲՊՀ կառուցվածքային ստորաբաժանում է, որի գործունեության իրավական հիմքը ԲՊՀ և սույն կանոնադրությունները և իրավական այլ ակտերն են:
2. Սույն կանոնադրությունը ընդունվում, նրանում լրացումներ կամ փոփոխություններ են իրականացվում ԲՊՀ գիտական խորհրդի որոշմամբ:

II. ՀԱՆՐԱԿԱՑԱՐԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ ԵՎ ՆՊԱՏԱԿԸ

3. Հանրակացարանի գործառույթներն են՝
 - 1) հյուրերի գրանցումը,
 - 2) պայմանագրերի պատրաստման և կնքման կազմակերպումը,
 - 3) վճարումների կատարման վերահսկողությունը,
 - 4) գույքի պատշաճ պահպանումը,
 - 5) ընթացիկ հարցերի կարգավորումը,
 - 6) հյուրերի մոտ ծագած խնդիրների կարգավորումը,
 - 7) ներքին և արտաքին (բակի) մաքրության ապահովումը:

4. Հանրակացարանի գործունեության նպատակը ԲՊՀ ուսանողների և հյուրերի ընդունելության կազմակերպումն ու նրանց կացության ապահովումն է:

III. ՀԱՆՐԱԿԱՑԱՐԱՆԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

5. Հանրակացարանի հաստիքացուցակը հաստատվում է ԲՊՀ հոգաբարձուների խորհրդի որոշմամբ՝ ռեկտորի ներկայացմամբ:
6. Հանրակացարանի ղեկավարումը իրականացնում է հանրակացարանի տնօրենը, որը նշանակվում և ազատվում է ռեկտորի հրամանով՝ աշխատակազմի կառավարման և տնտեսական հարցերի գծով պրոռեկտորի ներկայացմամբ:
7. Հանրակացարանի աշխատակիցներն ընդունվում և ազատվում են աշխատանքից ռեկտորի հրամանով՝ հանրակացարանի տնօրենի ներկայացմամբ:

IV. ՀԱՆՐԱԿԱՑԱՐԱՆԻ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ

8. Հանրակացարանը վերակազմակերպվում կամ լուծարվում է ԲՊՀ հոգաբարձուների խորհրդի որոշմամբ՝ ռեկտորի ներկայացմամբ:

Սույն կանոնակարգը հրապարակվել է 2022 թվականի հունվարի 4-ին: